



Եվրոպայի խորհրդի Ժամանակակից լեզուների եվրոպական կենտրոն

2020-2023 թվականների ծրագրի առաջարկների

Խթանել նորարարությունը լեզվական կրթության մեջ՝ փոփոխելով
համատեքստերը և զարգացնելով կարողությունները

Ակտիվ էք լեզվական կրթության ոլորտում՝ որպես ուսուցիչ, մանկավարժ,
հետազոտող, ուսումնական ծրագրեր կամ նյութեր պատրաստող:



ԺԼԵԿ-ի առաջարկների մրցույթը Ձեզ հնարավորություն է ընձեռում օգտվելու եվրոպական բացառիկ հարթակից՝ բանակցելու, հաղորդակցվելու և Ձեր նորարարական գաղափարները հրատարակելու: Դուք կարող էք Ձեր եզակի ներդրումն ունենալ Եվրոպայում լեզվական կրթության ոլորտում:

Եթե Դուք աշխատում և ապրում էք ԺԼԵԿ-ի անդամ երկրում, ցանկանում էք կիսել և հարստացնել Ձեր գաղափարները լեզուների ուսուցման վերաբերյալ եվրոպական համագործակցության միջոցով, ապա մենք պատրաստակամ ենք լսելու Ձեզ:

Խթանելով նորարարությունը լեզվական կրթության մեջ

ԺԼԵԿ-ն օգնում է լրացնելու լեզվական քաղաքականության և կրթության միջև առկա բացն ինչպես ֆորմալ, այնպես էլ ոչ ֆորմալ կրթության համատեքստերում:

ԺԼԵԿ-ը միավորում է մասնագետների ամբողջ Եվրոպայից՝ հարափոփոխ աշխարհում լեզվակրթության բնագավառում համատեղ նոր մեթոդներ և ուսումնական նյութեր մշակելու համար:

Իր կայքէջում ԺԼԵԿ-ն **n i u n i g h t n e r h i n**, մանկավարժներին և կրթության ոլորտի այլ մասնագետներին առաջարկում է մի շարք անվճար ռեսուրսներ:

ԺԼԵԿ-անդամ պետություններում լեզվական առաջնահերթությունները




Առաջարկների այս մրցույթի գերակա ուղղությունները հիմնված են ԺԼԵԿ-ի անդամ պետությունների կարիքների վրա, արտացոլում են լեզվի մասնագետների տեսակետները, և հաշվի են առնվում Եվրոպայի խորհրդի և այլ եվրոպական ու միջազգային կազմակերպություններում ընթացող զարգացումները:

Կցանկանա՞ք դիմել ծրագրերին՝ ԺԼԵԿ-ի առաջնահերթություններից մեկի կամ մի քանիսի շրջանակներում: Հետաքրքրվա՞ծ եք զարգացնել մատչելի, գործանական ռեսուրսներ, որոնք կարող են հեշտությամբ տեղայնացվել տարբեր ազգային կրթական համագորգերում որևէ հայտնի եվրոպական կառույցի առակցությամբ:

Հետաքրքրե՞ց: Մանրամասներին կարող եք ծանոթանալ ԺԼԵԿ-ի պաշտոնական կայքէջում՝ հայտադիմումների ներկայացման պահանջների ավելի մանրամասն ծանոթանալու համար այցելել ք ԺԼԵԿ-ի պաշտոնական կայքէջ:

Ծրագրին դիմելու վերջնաժամկետը 2019 թվականի ապրիլի 22-ն է:

Ժամանակակից եվրոպական լեզուների կենտրոնն Ավստրիայի Գրաց քաղաքում գործող Եվրոպական խորհրդի կառույց է: ԺԼԵԿ-ի առաքելությունն է նպաստել Եվրոպայում որակյալ լեզվական կրթության առաջընթացին: Բազմաթիվ ծրագրեր իրականացնող կենտրոնն աջակցում է իր 33 անդամ երկրներին՝ արդյունավետ լեզվական կրթության քաղաքականություն իրականացնելու համար:



ԺԼԵԿ անդամ պետություններն են Ալբանիան, Անդորրան, Հայաստանը, Ավստրիան, Բոսնիան և Հերցեգովինան, Բուլղարիան, Խորվաթիան, Կիպրոսը, Չեխիան, Դանիան, Էստոնիան, Ֆինլանդիան, Ֆրանսիան, Գերմանիան, Հունաստանը, Իսլանդիան, Լատվիան, Լիխտենշտեյնը, Լիտվան, Լյուքսեմբուրգը, Մալթան, Մոնտենեգրոն, Նիդերլանդները, Նորվեգիան, Լեհաստանը, Ռումինիան, Սերբիան, Սլովակիան, Սլովենիան, Շվեդիան, Շվեյցարիան և Նախկին Հարավսլավական Մակեդոնիայի Հանրապետությունը: